

Տասներորդ հաղորդում

Մեկ նոր մարդու՝ որպես Աստծու գլուխգործոցի Ստեղծողը

Գրվածքների ընթերցում. Ծնդ 1:26, Եփս 2:14-16, 4:22-24

- I. **Մարդուն ստեղծելիս Աստծու մտադրությունը ընդհանրական մարդ ձեռք բերելն էր, որը կարտահայտեր Նրան ու կներկայացներ Նրամ՝ Ծնդ 1:26, Եփս 2:15.**
- Ա. Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով Իր արտահայտության համար և մարդուն տվեց Իր տիրակալությունը, որպեսզի մարդը ներկայացնի Աստծուն ո հաշվեհարդար տեսնի Նրա քշնամու հետ՝ Ծնդ 1:26:
- Բ. Եկեղեցին՝ որպես նոր մարդը նոր ստեղծագործության մեջ, կրում է Աստծու պատկերը Աստծու արտահայտության համար և պատերազմում է Աստծու քշնամու դեմ Աստծու թագավորության համար՝ Կրս 3:10-11, Եփս 2:15, 4:24, 6:10-11:
- Գ. Այն, ինչ բաժանված ու ցրված էր հին մարդու մեջ, վերականգնվել է նոր մարդու մեջ՝ Ծնդ 11:5-9, Գրծ 2:5-12, Կրս 3:10-11:
- II. **Նոր մարդ՝ որպես Աստծու պետմը, գլուխգործոցը, ստեղծվել է Քրիստոսի մահվան միջոցով ու Նրա հարության մեջ՝ Եփս 2:10, 15-16.**
- Ա. Մենք պետք է հատուկ ուշադրություն դարձնենք 15-րդ խոսքի երկու արտահայտություններին՝ «Իր մսեղիում» և «Իր մեջ».
1. «Իր մսեղիում» Քրիստոսը վերջ դրեց տիեզերքում եղող բոլոր բացասական բաներին՝ Սատանային՝ բանսարկուին, Աստծու քշնամուն (Երր 2:14), մնողին (Հոմ 8:3, Հվի 1:29), ընկած մարդու մսեղին (Գյու 5:24), աշխարհին՝ «կոսմոսին»՝ Սատանայի չար համակարգին (Հվի 12:31), հին մարդով ներկայացված հին ստեղծագործությանը (Հոմ 6:6) և օրենքի բաժանող հրամանագրերին (Եփս 2:15):
 2. «Իր մեջ»՝ որպես ոլորտում, տարրում և էակիմքում, Քրիստոսը հրեաներին ու հեթանոսներին որպես մեկ նոր մարդու ստեղծեց։
 - ա. Քրիստոսը ոչ միայն մեկ նոր մարդու՝ Եկեղեցու Ստեղծողն է, այլև ոլորտը, որում նոր մարդը ստեղծվեց, և տարրն ու էակիմքը, որոնցով նոր մարդը ստեղծվեց։
 - բ. Քրիստոսը նոր մարդու բուն տարրն ու էակիմքն է, ինչի շնորհիվ Նա Աստծու աստվածային բնությունը մեկ ամբողջություն դարձեց մարդկայնության հետ՝ հմմտ Կրս 3:10-11։
- Բ. Նոր մարդուն ստեղծելիս նախ՝ մեր բնական մարդը խաչվեց Քրիստոսի կողմից, այնուհետև՝ Քրիստոսը, մեր հին մարդուն խաչով ջնջերով, աստվածային տարրը ներդրեց մեր մեջ, ինչի արդյունքում մենք դարձանք Աստծու աշխատանքի գլուխգործոցը՝ լիովին նոր բան տիեզերքում, Աստծու նոր հայտնագործությունը՝ Հոմ 6:6, Բ Կրթ 5:17.

1. «Գլուխգործոց» նշանակող հունարեն բառը՝ «պոյեմա»-ն է. այն նշանակում է «մի բան, որ գրվել կամ ստեղծագործվել է որպես բանաստեղծություն, պոեմ»:
 2. Պոեմ կարելի է համարել ոչ միայն բանաստեղծությունը, այլև արվեստի ցանկացած գործ, որն արտահայտում է այն ստեղծողի իմաստությունն ու մտահղացումը:
 3. Մենք՝ Եկեղեցին, Աստծու աշխատանքի գլուխգործոցը, Աստծու անսահման իմաստությունն ու աստվածային նոտակացումն արտահայտող պոեմ ենք. Եկեղեցին Աստծու իմաստուն ցուցադրությունն է այն ամենի, ինչ Քրիստոսն է՝ Եփս 3:10-11:
 4. Քրիստոսը մեզ համար Աստծուց իմաստություն դարձավ՝ որպես Աստծու փրկության երեք կենսականորեն անհրաժեշտ բաները՝ Ա Կրք 1:30.
 - a. Նա մեր արդարությունն է (մեր անցյալի համար), որի շնորհիվ արդարացվել ենք Աստծու կողմից, որպեսզի մեր հոգում վերածնվենք և աստվածային լյանքը ստանանք՝ Հոմ 5:18, 8:10:
 - b. Նա մեր սրբացումն է (մեր ներկայի համար), որի շնորհիվ սրբացվում ենք շնչում, այսինքն՝ փոխակերպվում ենք մեր մտքում, զգացմունքներում ու կամքում Նրա աստվածային լյանքով՝ 6:19, 22:
 - c. Նա մեր փրկագնումն է (մեր ապագայի համար), այսինքն՝ մեր մարմնի փրկագնումը (Հոմ 8:23), որի շնորհիվ կայլակերպվենք մեր մարմնում Նրա աստվածային լյանքով՝ Նրա փառավոր նմանությունն ունենալու համար՝ 8:23, Փլաջ 3:21:
 5. Աստծուց է այն, որ մենք նման ավարտուն ու կատարյալ փրկության ենք նաև ակցում, որը մեր ողջ էռությունը՝ հոգին, շունչն ու մարմինը, Քրիստոսի հետ օրգանապես մեկ է դարձնում և Քրիստոսին մեր ամեն ինչը դարձնում և մեզ դարձնում իմաստուն ցուցադրումն այն ամենի, ինչ Քրիստոսն է:
- III. Խաչի վրա-Քրիստոսն Իր մեջ ստեղծեց նոր մարդուն՝ Իր մսեղիում վերացնելով հրամանազրերում եղող պատվիրանների օրենքը՝ մեջսեփի բաժանության պատքը՝ Եփս 2:14ր-15ա.**
- Ա. Օրենքը, որի մասին խոսվում է 15-րդ խոսքում, ոչ թե բարոյական պատվիրանների օրենքն է, այլ ծիսական պատվիրանների, ինչպիսիք են թիֆաստությանը, շաբարը պահելուն և որոշակի կերակորներ ուտելուն վերաբերող պատվիրանները:
- Բ. Հրամանազրերը ապրելակերպի ու երկրպագության ձևերը կամ տարատեսակներն են, որոնք թշնամանք ու բաժանություն են ստեղծում.
1. Խաչի վրա Քրիստոսը վերացրեց ապրելակերպին ու երկրպագությանը վերաբերող բոլոր կանոնները, որոնք բաժանում էին ազգերին՝ խ. 15, Կողս 2:14:

2. Բարեկի ժամանակներից մարդկությունը քաժանվել է ապրելակերպին ու երկրպագության ձևերին վերաբերող հրամանազրերով. Աստծու տնտեսության մեջ եկեղեցական կյանքում մենք պետք է հաղթահարենք Բարեկ՝ Ծնն 11:1-9.
 - ա. Մեր միակ ակունքը պետք է Քրիստոսը լինի. մենք չպետք է քոյլ տաճք, որ մեր ակունքը լինի մեր անցյալին, մշակույթին կամ ազգությանը վերաբերող որևէ բան՝ հմմտ Կղս 3:10-11:
 - բ. Աշխարհիկ մարդիկ մշակութային տարրերությունները համարում են հեղինակության ակունք, բայց Քրիստոսի մեջ, մենք մեր վրայից հանել ենք այդ հեղինակությունը. այժմ մեր միակ հեղինակությունը Քրիստոսն ու իշխական միասնությունն են:
 - գ. Եթե պատրաստ լինենք քողնելու մշակութային հպարտությունը, Տերը կլարողանա պատշաճ եկեղեցական կյանք ձեռք բերել՝ Եփս 4:22-24:

IV. Նոր մարդու համար և նոր մարդու մեջ մենք պետք է քոյլ տաճք, որ Քրիստոսի խաղաղությունը դատավարի մեր սրտերում՝ 2:14ա, 15բ, Կղս 3:12-15, 2:14-18, Հռմ 5:1, Մտք 18:21-35.

- Ա. «Դատավարել» նշանակող հունարեն եզրույթը կարելի է նաև թարգմանել որպես «իրավարար լինել», «նախազահել», «զահակալել որպես կառավարի ու ամեն բան որոշող». Քրիստոսի՝ մեր սրտերում դատավարող խաղաղությունն իսպառ վերացնում է մեր քողոքները ցանկացած մեկի նկատմամբ՝ Կղս 3:13-15:
- Բ. Հաճախ մեր ներսում առկա երեք կողմ ենք գիտակցում՝ դրական, բացասական ու չենոք. ուստի անհրաժեշտ է, որ ներքին դատավարումը լուծի մեր ներսում եղող վեճը.
 1. Ամեն անգամ, եթե զգում ենք, որ մեր ներսում տարրեր կողմեր վիճում կամ կովում են, պետք է տեղ տաճք Քրիստոսի նախազահող խաղաղությանը և քոյլ տաճք, որ այս խաղաղությունը, որը նոր մարդու միասնությունն է, դեկավարի մեր ներսում ու վերջի խոսքն ասի:
 2. Մենք պետք է մի կողմ դմենք մեր կարծիքները, մեր պատկերացումները և լսենք ներքնակվող միջնորդ Դատավորի խոսքը:
- Գ. Եթե քոյլ տաճք, որ Քրիստոսի խաղաղությունը մեր սրտերում դատավարի, այս խաղաղությունը կլուծի մեր միջև եղող բոլոր վեճները. այդժամ մենք ուղղահայաց խաղաղություն կունենանք Աստծու և հորիզոնական խաղաղություն՝ սրբերի հետ.
 1. Քրիստոսի խաղաղության դատավարման միջոցով մեր խնդիրները լուծվում են, և սրբերի միջև առկա տարածայնություններն անհետանում են. այդժամ եկեղեցական կյանքը պահպանվում է քաղցրության մեջ, և նոր մարդը շարունակում է գործնականում գոյություն ունենալ:

2. Քրիստոսի խաղաղության դատավարումը Քրիստոսն է, ով աշխատում է մեր ներսում, որպեսզի իրազործի իր դեկավարումը մեզ վրա, վերջին խոսքն ասի և վերջնական վճռոր կայացնի՝ հմնտ Եսյ 9:6-7:
3. Եթե մնանք Քրիստոսի գահակալող խաղաղության դեկավարման ներքո, ուրիշներին չենք վիրավորի և վնաս չենք հասցնի. ընդհակառակը, Տիրոջ շնորհով ու Նրա խաղաղության օգնությամբ ուրիշներին կյանք կսպասավորենք:
4. Այս խաղաղությունը պետք է կապի բոլոր հավատացյալներին ու միացնող կապ դառնա՝ Եփս 4:3:

V. Մեկ նոր մարդու մեջ Քրիստոսը բոլոր անդամներն է և բոլոր անդամների մեջ է՝ Կղոս 3:10-11.

- Ա. Մեր մեջ բնակվող Քրիստոսը մեկ նոր մարդու բաղադրիչն է՝ 1:27, 3:11.
1. Քանի որ Քրիստոսը նոր մարդու բոլոր անդամներն է, նոր մարդու մեջ հնարավորություն, տեղ չկա որևէ բնական մարդու համար (որևէ ոսայի, ազգության, մշակույթի կամ հասարակական կարգավիճակի համար) իմաստու 10:11:
 2. Ինչպիսի մարդ էլ որ լինենք, եթե բանը վերաբերում է նոր մարդուն, մենք բոլորս ոչինչ ենք:
 3. Մեկ նոր մարդու մեջ միայն մեկ անձ կա՝ համարովանդակ Քրիստոսը՝ 2:17, 3:4, 11:
- Բ. Նոր մարդու համար մենք բոլորս պետք է ընդունենք Քրիստոսին՝ որպես մեր անձի՝ Եփս 2:15, 3:17ա.
1. Եկեղեցուն՝ որպես Քրիստոսի Սարմնին, անհրաժեշտ է Քրիստոսը՝ որպես դրա կյանքը. Եկեղեցուն՝ որպես նոր մարդուն, անհրաժեշտ է Քրիստոսը՝ որպես դրա անձը:
 2. Քրիստոսը բոլորին մեջ է որպես մեկ անձ, ուստի բոլորս միայն մեկ անձ ունեն՝ Գլու 2:20, Եփս 3:17ա:
 3. Նոր մարդու գործնական գոյության համար հին մարդու ամբողջական անձը պետք է մի կողմ դրվի և մենք պետք է ապրենք մեր նոր անձով՝ Հոմ 6:6, Գլու 2:20, Եփս 4:22-24, 3:17ա.
- ա. Մենք պետք է ապրենք նոր մարդու մեջ եղող կյանքով՝ Քրիստոսին որպես մեր անձն ընդունելով և դրանով իսկ Նրան բոյլ տալով, որ կայացնի բոլոր որոշումները մեր մեջ:
- բ. Հենց որ տեսնենք մեր՝ նոր մարդու մասը լինելը, անկարող կլինենք որոշումներ կայացնելու սուս ինքներս մեզնով:
- գ. Մենք պետք է տեսնենք, որ մենք ընդհանրական Սարմինն ենք ու ընդհանրական նոր մարդը, և որ թե՛ մեր ապրելակերպը (անձը) և թե՛ մեր շարժվելը (կյանքը) ընդհանրական են՝ Ա Կրթ 12:12, Հոմ 12:4-5:

ՓՈՐՁԱՌԱԲԱՐ ԱՊՐԵԼ, ՎԱՅԵԼԵԼ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ (2)

4. Մենք պետք է Եփս 2:15-ի «մեկ նոր մարդ» արտահայտությունը դիտարկենք Հոմ 15:6-ի «մեկ բերան» և Ա Կրք 1:10-ի «միևնույն բանը խստել» արտահայտությունների հետ.
 - ա. Նախկինում չափազանց շատ բերաններ կային, որովհետև չափանց շատ անձինք կային:
 - բ. «Սիարանորդն»-ը և «մեկ բերանով»-ը (Հոմ 15:6) նշանակում են, որ թեև մենք շատ ենք, ու թեև բոլորը խոսում են, մենք բոլորս խստում ենք «միևնույն բանը» (Ա Կրք 1:10):
 - գ. Թեև մենք շատ ենք և տարրեր տեղանքներից ենք, բոլորս մեկ բերան ունենք, և բոլորս նույն բանն ենք խոսում. պատճառն այն է, որ բոլորս մեկ նոր մարդն ենք, ով միայն մեկ անձ ունի՝ Եփս 2:15, 4:22-24, 3:17ա, Հոմ 15:6, Ա Կրք 1:10: